



**ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿԵՆՍՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ**

**Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտում աշխատանքային
պայմաններն ու աշխատանքային անվտանգությունը**

Սույն փաստաթուղթը պատրաստվել է «Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի փորձագիտական խմբի (Նվարդ Փիլիպոսյան, Անահիտ Սիմոնյան) կողմից Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատրաստանաբերության կենտրոնի պատվերով՝ «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»-ի և ԱՄՆ ՄՁԳ ֆինանսավորմամբ իրականացվող «Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության երկխոսություն, տեղեկատվական հարթակ և երիտասարդների ներգրավվածություն» ծրագրի շրջանակներում:

1. Ներածություն (փաստաթղթի հակիրճ նկարագրություն)

Սույն փաստաթուղթն ամփոփում է Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտում առկա աշխատանքային պայմանների և աշխատանքային անվտանգության վերաբերյալ մինչ այժմ իրականացված ուսումնասիրությունները, ներկայացնում է ներպետական օրենսդրական կարգավորումները և միջազգային ընդունված չափանիշները, մատնանշում տվյալ ոլորտում առկա իրավական, քաղաքականության և գործնական խնդիրներն ու բացերը և առաջարկում դրանց արձագանքելու հնարավոր տարբերակներ: Փաստաթղթում անդրադարձ չի կատարվում հանքավայրերում արտադրական աղետների կանխարգելման խնդիրներին, քանի որ այդ խնդրի շուրջ տեղի է ունենալու առանձին քննարկում: Փաստաթուղթը ներկայացվելու է ս.թ. ապրիլի 16-17-ին շահագրգիռ կողմերի կայանալիք հանդիպման շրջանակներում:

2. Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտում աշխատանքային պայմանների և աշխատանքային անվտանգության ուղղությամբ կատարված ուսումնասիրությունները

Հանքարդյունաբերության ոլորտում աշխատանքային պայմանների և աշխատանքային անվտանգության վերաբերյալ Հայաստանում մինչ օրս իրականացված ուսումնասիրությունները պայմանականորեն կարելի է բաժանել 3 մասի՝

- հանքարդյունաբերության ոլորտի ընդհանուր կարգավորումների վերաբերյալ ուսումնասիրություններ,
- աշխատանքային պայմանների և աշխատանքային անվտանգության ընդհանուր խնդիրներին առնչվող ուսումնասիրություններ,
- հանքարդյունաբերության ոլորտում աշխատանքային անվտանգության և աշխատանքային պայմանների հիմնախնդիրներին առնչվող ուսումնասիրություններ:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ համապարփակ, խորը և դետալային հետազոտություն այս թեմայով դեռևս չի իրականացվել:

Աշխատանքային իրավունքների պաշտպանության, դրանց մեխանիզմների մասին իրականացված ուսումնասիրությունները՝ վեր են հանել մի շարք օրենսդրական և գործնական բացեր, ինչպիսիք են.

- պետական թերի վերահսկողական համակարգը,



- արհմիությունների ոչ բավարար զարգացվածությունը,
- աշխատանքի վտանգավորության գնահատման և դրան արձագանքելու՝ ռիսկի գնահատման վրա հիմնված և ռիսկի կանխարգելմանը միտված կարգավորումների և քաղաքականությունների բացակայությունը:

Հանքարդյունաբերության ոլորտի համալիր ուսումնասիրություններնⁱⁱ իրենց հերթին բացահայտել են Հայաստանում տվյալ բնագավառում տեղական աշխատուժի ցածր վարձատրության խնդիրները, արդյունաբերական պատահարների և վթարների ռիսկը, պարտադիր առողջապահական ապահովագրության համակարգի բացակայությունը, աշխատողների անվտանգության և առողջության ռիսկերի կառավարման խնդիրների նկատմամբ ոչ բավարար ուշադրությունը:

Հանքարդյունաբերության ոլորտում առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների իրացման տեսանկյունից՝ իրականացված հետազոտություններում վեր են հանվել հետևյալ խնդիրներըⁱⁱⁱ:

- անվտանգության կանոնների և օրենքի պահանջների կատարման նկատմամբ ոչ պատշաճ վերահսկողությունն ու կախվածությունը գործատուի բարի կամքից,
- աշխատակիցների համար աշխատանքի վարձատրության և դրա ձևավորման կարգի անհստակությունը,
- վնասի փոխհատուցման մեխանիզմների ոչ լիարժեք գործողությունը, հատկապես պլաստիկ վիրահատությունների իրականացման մասով,
- հանքահորերում աշխատանքային պայմանների, հատկապես սննդի և հանգստի ոչ պատշաճ ապահովումը:

3. Առողջ, անվտանգ և արժանապատիվ (արդարացի) աշխատանքային պայմանների վերաբերյալ հայաստանյան օրենսդրական կարգավորումներն ու միջազգային իրավական պարտավորությունները

ՀՀ Սահմանադրության 82-րդ հոդվածով ամրագրված է յուրաքանչյուր աշխատողի՝ առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունքը:

Աշխատանքային իրավահարաբերությունները, այդ թվում նաև աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները կարգավորող հիմնական իրավական ակտեր ՀՀ աշխատանքային օրենսգրքն է, որի 23-րդ գլխում (հոդվածներ 242-262) ամրագրված են աշխատողների անվտանգության և առողջության պահպանման վերաբերյալ մի շարք դրույթներ: Մասնավորապես ամրագրված է .

- գործատուի պարտավորությունը՝ ապահովելու աշխատողների առողջության և անվտանգության պահպանումը,
- գործատուի պարտավորությունը՝ ընդունելու աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման վերաբերյալ ներքին իրավական ակտեր,
- գործատուի պարտավորությունը՝ աշխատողներին տեղեկացնելու աշխատողների անվտանգության ապահովման և առողջության վիճակի վերլուծության, պլանավորման, միջոցառումների կազմակերպման և վերահսկման բոլոր հարցերի մասին և խորհրդակցելու նրանց հետ,
- թվարկված են աշխատողների նորմալ աշխատանքի համար անհրաժեշտ պայմանները,
- մասնագիտական ռիսկի գործոններով պայմանավորված՝ կարգավորված են աշխատողների պարտադիր բժշկական զննության կազմակերպման պահանջները, աշխատանքի ժամանակավոր դադարեցման պայմանները և այլն:



Պատշաճ, առողջ ու անվտանգ աշխատանքային պայմանների վերաբերյալ հիմնական ենթաօրենսդրական կարգավորումները վերաբերում են ծանր և վնասակար աշխատանքի համար աշխատավարձի հավելումներին, աշխատաժամանակի կրճատ տևողության սահմանմանը, երկարացված արձակուրդի և արտոնյալ պայմաններով կենսաթոշակի տրամադրմանը: Ընդ որում, հավելումները, աշխատաժամանակի կրճատումներն ու կենսաթոշակը տրամադրվում են ոչ թե փաստացի ռիսկայնության գնահատման հիմքով, այլ որոշակի պաշտոններ/հաստիքներ զբաղեցնելու հանգամանքով պայմանավորված^{vi}: Այսպիսով, **ռիսկի գնահատումը, նվազեցումը և վերացումը դրված չեն վերոգրյալ կարգավորումների հիմքում:**

«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի^v 20-րդ հոդվածի համաձայն՝ առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտ շահագործող անձը պարտավոր է իր գործունեության ամբողջ ժամանակահատվածում **պարտադիր կարգով ապահովագրել** իր պատասխանատվության ռիսկերը, ներառյալ արտադրական վտանգավոր օբյեկտի շահագործման ընթացքում, և դրա հետևանքով իր **աշխատողների**, ինչպես նաև աշխատանքների հետ անմիջականորեն չկապված, սակայն այդ աշխատանքների արդյունքում քաղաքացիների **կյանքին, առողջությանը և գույքին պատճառված վնասները**: Այս կարգավորումը, սակայն, մինչ օրս չի գործում, քանի որ ՀՀ Կառավարության կողմից չի սահմանվել պարտադիր ապահովագրման ենթակա առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտների ցանկը, ինչպես պահանջված է նույն հոդվածի 2-րդ մասով:

Աշխատողների աշխատանքային պայմանների բարելավմանն ու առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների ապահովմանն ուղղված գործողություններ նախատեսված են նաև մի շարք քաղաքականության փաստաթղթերով: Մասնավորապես ՀՀ Կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված է աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման պահանջները սահմանող ՀՀ օրենսդրության կատարելագործում և համապատասխան իրավական ակտերի նախագծերի մշակում, որի վերջնաժամկետը 2022 թ. -ի մայիսն է:

«Արժանապատիվ աշխատանք»^{vii} ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է ՀՀ Կառավարության կողմից ԱՄԿ-ի հետ համատեղ, նախատեսված է անվտանգ և առողջ աշխատանքային պայմանների ապահովման ազգային քաղաքականության բարելավում:

4. Առողջ, անվտանգ և արժանապատիվ (արդարացի) աշխատանքային պայմանների ապահովման ինստիտուցիոնալ շրջանակը

Աշխատանքային պայմանների և աշխատանքային անվտանգության ապահովման առումով պատասխանատու մարմինը **ՀՀ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինն է** (այսուհետև նաև՝ Տեսչական մարմին): Տեսչական մարմնի լիազորությունները ոլորտում ամրագրված են «Տեսչական ստուգումների մասին» ՀՀ օրենքով և Տեսչական մարմնի կանոնադրությամբ^{vii}:

Տեսչական մարմնի գործունեությունը ներառում է ինչպես վերահսկողությունը, ներառյալ ստուգումների իրականացումը, այնպես էլ իրազեկման աշխատանքների իրականացումը, ուղեցույցների մշակումը, վիճակագրության վարումը և անհրաժեշտության դեպքում՝ տնտեսվարողների լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին միջնորդագրի ներկայացումը պատասխանատու մարմնին: Ստուգումները նպատակ ունեն վեր հանելու տնտեսվարող սուբյեկտի (ներառյալ հանքարդյունահանող կազմակերպության) կողմից տարվա ընթացքում ներկայացված հաշվետվությունների համապատասխանությունն իրականությանը, ուստի ստուգման ենթակա տնտեսվարող սուբյեկտներն ընտրվում են Տեսչական մարմնի կողմից նախապես՝ ռիսկի գնահատման հիման վրա կազմված ստուգման տարեկան ծրագրի համաձայն և Կառավարության կողմից հաստատված ստուգաթերթի շրջանակներում: **Այսինքն՝ ստուգման ենթակա սուբյեկտը նախապես տեղեկացված է լինում, թե երբ և ինչ հարցերի շուրջ է իրականացվելու ստուգումը, ինչն էապես**



նվազեցնում է աշխատանքային պայմանների և աշխատանքի անվտանգության հետ կապված իրական ռիսկերի բացահայտման հնարավորությունը:

Ի կատար ածելով Մարդու իրավունքների ռազմավարության 2020-2022 թթ. -ի ազգային ծրագրի 73-րդ գործողությունը^{viii} 2019 թ. -ին և 2020 թ. -ին ընդունվեցին Առողջապահական և աշխատանքի տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշները^{ix} և վերջինիս կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթը,^x որը վերաբերում է հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման ընթացքում աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառի վերահսկողությանը: **Միևնույն ժամանակ ստուգումների իրականացման հստակ գործիքակազմը որևէ իրավական ակտով սահմանված չէ, ինչը ստուգման արդյունավետության կարևորագույն չափանիշներից է:** Թեև ստուգաթերթում հանդիպում են հղումներ փաստաթղթային և տեսողական ստուգման մեթոդներին, սակայն ամրագրված չէ Տեսչական մարմնի կողմից այլ գործիքակազմի (օրինակ՝ աշխատողների հետ առանձնազրույցների) կիրառման հնարավորություն:

Այսպիսով, ստուգումների իրականացման շրջանակում քիզնեսի շահերը վարչական միջամտություններից պաշտպանելու նպատակով ընդունված օրենսդրական դրույթները սահմանափակում են Տեսչական մարմնի կողմից ռիսկերի վերհանման և աշխատողների առողջության ու անվտանգության պաշտպանության երաշխիքների գնահատման հնարավորությունները:

Տեսչական մարմնի մարդկային ռեսուրսները բավականին փոքր են և բաժանված են՝ ըստ վարչատարածքային միավորների: Այսպես, Կապանում, որտեղ ամենախոշոր հանքարդյունաբերական կազմակերպություններն են գտնվում, կա ընդամենը 6 տեսուչ^{xi}:

Ինստիտուցիոնալ առումով աշխատողների իրավունքների պաշտպանության հարցում կարևորագույն դեր ունեն նաև **արհեստակցական միությունները:** Վերջիններիս գործունեությունը կարգավորվում է «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ աշխատանքային օրենսգրքով: Արհմիությունները, սակայն, կարող են ձևավորվել միայն միևնույն ընկերությունում աշխատող աշխատակիցների կողմից, որոնք նաև ֆինանսավորման մի մասը կարող են ստանալ գործատուից: Սա ընթացակարգային առումով կախվածության մեջ է դնում արհմիությանը գործատուից: Մյուս կողմից՝ օրենսդրությամբ սահմանված չեն արհմիության աշխատակիցների անկախության բավարար երաշխիքներ՝ ապահովելու համար, որ վերջիններս կարողանան դեմ գնալ խոշոր գործատուին և պահանջել աշխատանքային պայմանների, անվտանգության երաշխիքների պահպանում և բարելավում: Այսպիսով, **արհմիություններն իրենց ձևավորման կարգի, գործառույթների և գործունեության առումով ունեն օրենսդրական և պրակտիկ բնույթի մի շարք խնդիրներ, որոնք թույլ չեն տալիս լիարժեք կերպով պաշտպանել արհմիության անդամների իրավունքները հատկապես այնպիսի խոշոր գործատուների դեպքում, ինչպիսիք հանքարդյունաբերող ընկերություններն են:**

5. Քննարկվող խնդրի ուղղությամբ միջազգային ստանդարտների և լավագույն փորձի օրինակ(ներ)

Աշխատանքային անվտանգության և առողջության միջազգային ստանդարտները սահմանվում են Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) մի շարք կոնվենցիաներով: ՀՀ-ն վավերացրել է Հանքահորերում անվտանգության և առողջության մասին ԱՄԿ C176 կոնվենցիան^{xii}, Արդյունաբերական վթարների կանխարգելման մասին C174 կոնվենցիան^{xiii} և Աշխատանքի տեսչության մասին C81 կոնվենցիան^{xiv}:

ՀՀ-ն, սակայն, չի վավերացրել առանցքային կարևորություն ունեցող Աշխատանքի անվտանգության և առողջության մասին C155 կոնվենցիան:^{xv}



Առողջ, անվտանգ և արժանապատիվ (արդարացի) աշխատանքային պայմանների իրավունքներն ամրագրված են նաև ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի (այսուհետ՝ նաև Դաշնագրի) 7-րդ հոդվածում^{vi} և ՀՀ կողմից վավերացված Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի (Խարտիա) 2-4-րդ հոդվածներում^{vii}:

Աշխատանքային միջավայրի, աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման ազգային քաղաքականության առկայությունը թե՛ ԱՄԿ-ի կողմից առաջադրվող պահանջ է և թե՛ Դաշնագրի կոմիտեի կողմից պետություններին ուղղված կարևորագույն ակնկալիք^{viii}: ՄԱԿ-ի Դաշնագրի կոմիտեն իր թիվ 23-րդ Ընդհանուր մեկնաբանությունում առանձնացրել է այն **հիմնական ոլորտները**, որոնք պետք է ներառի ազգային քաղաքականությունը: Դրանք համընկնում են նաև ԱՄԿ C155 և C176 կոնվենցիաներով ամրագրված ստանդարտներին: Այդ ոլորտների թվին են դասվում մասնավորապես աշխատավայրերի, աշխատանքային գործընթացների, գործիքների, մեքենաների, ինչպես նաև քիմիական, ֆիզիկական և կենսաբանական նյութերի ձևավորումը, փորձարկումը, ընտրությունը, փոխարինումը, տեղադրումը և պահպանումը, վերջիններիս և աշխատակիցների կամ վերահսկող անձանց միջև հարաբերությունները, արտադրական մեքենաների, աշխատաժամանակի ու աշխատանքի կազմակերպման կանոնների հարմարեցումն աշխատողների ֆիզիկական ու մտավոր կարողություններին, աշխատողների անվտանգության և առողջության պահպանման աշխատանքներում որևէ կերպ ներգրավված անձանց պարբերաբար վերապատրաստումները, աշխատողների և նրանց ներկայացուցիչների պաշտպանվածությունը կարգապահական պատասխանատվությունից՝ վերջինների՝ անմիջական լուրջ վտանգի առկայության պարագայում ազգային քաղաքականությանը համապատասխան արձագանքելու դեպքում:^{ix} **Քաղաքականությունը պետք է ներառի նաև կարգավորումներ դժբախտ պատահարների և հիվանդությունների համար գործատուի պատասխանատվության, վիճակագրական տվյալների հավաքման, մշակման և վերլուծության վերաբերյալ և սահմանի կենտրոնական համակարգող մարմին, որը պետք է պատասխանատու լինի իրավիճակի մշտադիտարկման համար:** Քաղաքականության կարևորագույն բաղադրիչներից են պատշաճ վերահսկողական մեխանիզմների և սանկցիաների առկայությունը, համապատասխան պետական մարմինների կողմից կազմակերպության գործունեության դադարեցման որոշում կայացնելու լիազորությունը վտանգի առկայության դեպքում, աշխատողների վնասների փոխհատուցման, բժշկական և վերականգնողական ծառայություններից օգտվելու իրավունքները:

Աշխատողների անվտանգության ապահովման տեսանկյունից ամենաառաջադեմներից է համարվում **Չիլի օրենսդրությունը**^x: Այն երաշխավորում է աշխատողների անվճար բժշկական օգնության իրավունքը աշխատավայրում գրանցված վթարի կամ հիվանդության պարագայում: Օրենքը նաև ստեղծում է ապահովագրական համակարգ նշված դրույթը իրականացնելու համար: Ավելին, այն պահանջում է, որ 25 և ավելի աշխատող ունեցող ընկերությունները ստեղծեն հիգիենայի և անվտանգության գործընկերային հանձնաժողովներ: Բարձր չափորոշիչներ են սահմանված աշխատավայրի հիմնական առողջապահական կարգավորումների համար, որոնցից շատերը համապատասխանում են նաև հանքարդյունաբերության ոլորտին, օրինակ՝ հանքավայրի տարածքում արտակարգ պատահարներին արձագանքող թիմի առկայությունը, իսկ 50-ից ավելի աշխատողներ ունեցող ծրագրերի դեպքում՝ տեղում առողջապահական կլինիկա ունենալը:

6. Քննարկվող թեմայի ուղղությամբ վեր հանված հիմնական օրենսդրական և ինստիտուցիոնալ խնդիրները և բացերը

Ուսումնասիրելով վերոնշյալ օրենսդրական կարգավորումներն ու ՀՀ ինստիտուցիոնալ առանձնահատկությունները, ինչպես նաև մինչ օրս կատարված ուսումնասիրությունները՝ առանձնացրել ենք հետևյալ օրենսդրական և ինստիտուցիոնալ խնդիրներն ու բացերը, որոնք առավել հրատապ արձագանքի կարիք ունեն այսօր.

- i. ՀՀ-ն մինչ օրս չի մշակել ու չի ընդունել աշխատանքային միջավայրի, աշխատանքի անվտանգության և առողջության պահպանմանն ուղղված **ազգային քաղաքականություն**: Մասնավորապես մինչ օրս չի ընդունվել մասնագիտական առողջության և աշխատանքային անվտանգության պահպանման ռազմավարությունը, որը, ըստ ԱՄԿ-ին ՀՀ կողմից հայտնած տեղեկության^{xxi}, մշակել է ՀՀ Առողջապահության նախարարությունը 2015 թ.-ից: ՀՀ օրենսդրական ներկայիս կարգավորումները նվազագույնի են հասցնում աշխատողի առողջության ու անվտանգության ռիսկերի կառավարմանն ուղղված գործատուի պարտավորությունները՝ սահմանափակելով այն վնասակարության համար աշխատողներին վճարվող ամսական հավելավճարներով և աշխատաժամանակի կրճատմամբ և **չեն ներառում ռիսկի նվազեցումը և վերացումը որպես քաղաքականության և օրենսդրության կարգավորման մաս**: Այս առումով հատկանշական է նաև, որ ՀՀ-ն մինչ օրս չի վավերացրել առանցքային կարեվորություն ունեցող Աշխատանքի անվտանգության և առողջության մասին C155 կոնվենցիան, որն այս ոլորտում ազգային քաղաքականության ձևավորման կարևորագույն ստանդարտների իրավական հիմքը կարող է լինել:
- ii. **Տեսչական մարմնի** գործունեությունը ունի օրենսդրական և ինստիտուցիոնալ խնդիրներ:
- Տեսչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողության, մասնավորապես ստուգումների գործիքակազմը չի ներառում աշխատողների հետ առանձնազրույցները, վերջիններիս հետ թիրախային խմբերով քննարկումներ անցկացնելը, նրանց պատրաստվածության ստուգումը և այլ անհրաժեշտ մեթոդներ՝ աշխատանքի անվտանգության հետ կապված իրական խնդիրները վեր հանելու համար: Վերահսկողության իրականացումը ստուգումների և անհատների կողմից ստացված բողոքների հիման վրա, առանց լայնածավալ մշտադիտարկման մեթոդների կիրառման, էապես նվազեցնում է խախտումների բացահայտման արդյունավետությունը:
 - Տեսչական մարմնին տրամադրված մարդկային ռեսուրսները ևս օբյեկտիվորեն բավարար չեն խոշոր հանքարդյունաբերող կազմակերպություններում անվտանգության երաշխիքների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար:
- iii. **Արհմիությունները՝** որպես աշխատողներին ներկայացնող սոցիալական գործընկերության կազմակերպություններ և որպես աշխատողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հիմնական ինստիտուտներ, չունեն բավարար օրենսդրական մեխանիզմներ և ձևավորված կառուցակարգեր՝ աշխատանքի պայմանների և աշխատանքի անվտանգության հարցերի նկատմամբ գործատուների ուշադրությունը սևեռելու և դրանց լուծումներ տալու համար: Մասնավորապես հանքարդյունաբերող կազմակերպությունների աշխատակիցները մեծամասամբ Լեռնագործների, մետալուրգների և ոսկերիչների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային միության անդամներ են: Արհմիության պաշտոնական կայքի տվյալներով միակ դեպքը, երբ արհմիությունը պաշտոնապես դիմել է Կառավարությանը աշխատողների շահերի պաշտպանության կոչով, «Վալեքս գրուպ»-ի գործունեության դադարեցման հետևանքով Թեղուտի հանքի և Ալավերդու պղնձամոլիբդենային կոմբինատի աշխատակիցների լայնածավալ ազատումն էր^{xxii}: Մինչդեռ նույն կազմակերպությունը տուգանվել էր թուլատրելի արտանետումների թիվը 6-7 անգամ գերազանցելու համար, սակայն արհմիությունը հանդես չէր եկել աշխատողների առողջությանը հասցվող վնասի գնահատման և անվտանգության բարելավման կոչերով:
- iv. ՀՀ-ում չի գործում հանքարդյունաբերող կազմակերպությունների աշխատակիցների **առողջության պարտադիր ապահովագրության** համակարգը, մինչդեռ նման պահանջը կարող է լիովին արդարացված լինել՝ հաշվի առնելով այն, որ նրանք խոշոր շահույթ ստացող գործատուներ են: Թեև աշխատակիցների կյանքի և առողջության պարտադիր ապահովագրության իրավական հիմքերը դրված են վերևում ներկայացված «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, սակայն Կառավարության կողմից դեռևս հաստատված չէ համակարգի՝ ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ

առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտների ցանկը, որը պետք է ներառի նաև հանքարդյունաբերող կազմակերպությունները: Միևնույն ժամանակ, ներկայումս պարբերաբար իրականացվող պարտադիր բժշկական զննումներից բացի, գործատուները աշխատողների առողջության պահպանման ու վերականգնման ուղղությամբ որևէ այլ քայլ ձեռնարկելու իրավական պարտավորություն չունեն, ինչը խոցելի վիճակում է դնում աշխատողներին և առողջական խնդիրների ի հայտ գալու դեպքում աղքատության տանում նրանց ընտանիքներին:

7. Առկա իրավիճակի բարելավման նպատակով քաղաքականության մշակման նախնական առաջարկներ

Առկա իրավիճակի բարելավման նպատակով, հաշվի առնելով նաև միջազգային ստանդարտներն ու լավագույն փորձը, ներկայացնում ենք հետևյալ հրատապ, կարճաժամկետ և երկարաժամկետ առաջարկները:

Հրատապ առաջարկներ

- ✓ Իրականացնել հանքարդյունաբերության ոլորտում աշխատանքային պայմանների և աշխատանքի անվտանգության հետ կապված լայնածավալ հետազոտություն՝ վեր հանելով օրենսդրական, ինստիտուցիոնալ և պրակտիկ մակարդակում առկա բոլոր բացերն ու խնդիրները:
- ✓ Վավերացնել Աշխատանքի անվտանգության և առողջության մասին C155 կոնվենցիան:
- ✓ Իրականացնել աշխատողների հետ լայնածավալ իրազեկման աշխատանքներ՝ աշխատանքի անվտանգության խնդիրների վերաբերյալ:
- ✓ Վեր հանել Տեսչական մարմնի գործունեության նյութական և պոտենցիալ կոռուպցիոն ռիսկերը և դրանց կանխարգելման լավագույն տարբերակները:
- ✓ Հաստատել պարտադիր ապահովագրման ենթակա առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտների ցանկը՝ ներառելով բոլոր հանքարդյունաբերող օբյեկտները:

Կարճաժամկետ առաջարկներ

- ✓ Ընդունել մասնագիտական առողջության և աշխատանքային անվտանգության պահպանման ազգային քաղաքականություն, որի կենտրոնական նպատակը կլինի աշխատանքի վտանգների ռիսկերի նվազեցումը և վնասակարության կանխարգելումը, և այն միջազգային ստանդարտներին համապատասխան կստեղծի համակարգման արդյունավետ մեխանիզմ:
- ✓ Ընդլայնել Տեսչական մարմնի գործիքակազմը՝ ներառելով նաև աշխատողների հետ առանձնազրույցները, վերջիններիս հետ թիրախային խմբերով քննարկումներ անցկացնելը, նրանց պատրաստվածության ստուգումը, ինչպես նաև բարելավել տնտեսվարող սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելու մեխանիզմներն ու դեպքերը: Ավելացնել Տեսչական մարմնի աշխատակիցների թիվը:
- ✓ Ներդնել հանքարդյունաբերության ոլորտում աշխատողների առողջության պարտադիր ապահովագրության համակարգ:

ⁱ Տե՛ս մասնավորապես <http://www.osf.am/wp-content/uploads/2013/12/Avetik-paper.pdf>, <https://www.osf.am/wp-content/uploads/2014/06/Labour-Inspection-in-Armenia-A.-Mejlumyan.pdf>, https://oxygen.org.am/wp-content/uploads/2020/08/3_ENG-1.pdf:

ⁱⁱ Տե՛ս մասնավորապես https://mlri.org.am/media/pdfs/132_1469.pdf, https://mlri.org.am/media/pdfs/95_6804.pdf, The World Bank (2016), Armenia: Strategic Mineral Sector Sustainability Assessment, April (անգլերեն), էջ 77:

iii Տե՛ս ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեին Հայաստանի ՔՀԿ-ների կողմից ներկայացվող զեկույցը՝ «Անվտանգ և առողջ աշխատանքային պայմանների իրավունքի իրացումը Հայաստանում. շեշտադրելով Սյունիքի մարզը», 2019:

iv Տե՛ս Կառավարության որոշումը, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=140548>:

v Տե՛ս Օրենքը, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=65225>:

vi Տե՛ս Ծրագիրը, <http://www.hamk.am/docs/DWCP.pdf>:

vii Տե՛ս Կանոնադրությունը, <https://www.hlib.am/charter/>:

viii Տե՛ս Ռազմավարությունը, http://e-rights.am/?app=AppEvent&page=default&event_id=247&event_tab=action:

ix Տե՛ս Կառավարության որոշումը, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=151770>:

x Տե՛ս Ստուգաթերթը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=145652>:

xi Տե՛ս https://www.hlib.am/confirmation_list/:

xii Տե՛ս Կոնվենցիան, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=47297>:

xiii Տե՛ս Կոնվենցիան, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=47296>:

xiv Տե՛ս Կոնվենցիան, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=24576>:

xv Տե՛ս Կոնվենցիան, https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO::P12100_ILO_CODE:C155:

xvi Տե՛ս Դաշնագիրը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=18501>:

xvii Տե՛ս Խարտիան, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=24230>:

xviii Դաշնագիրը ՀՀ կողմից վավերացվել է 1993 թ. -ին:

xix Տե՛ս Կոմիտեի Ընդհանուր մեկնաբանությունը, <https://www.refworld.org/docid/5550a0b14.html>:

xx Տե՛ս https://mlri.org.am/media/pdfs/95_6804.pdf:

xxi Տե՛ս ԱՄԿ կողմից ՀՀ-ին ուղղված ուղիղ հարցումը C174 և C176 կոնվենցիաների վերաբերյալ, https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:13100:0::NO::P13100_COMMENT_ID:3340250:

xxii Տե՛ս http://www.hamk.am/members.php?lang=arm&member_id=13&parent=2: